ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-2»

ք.Երևան «25» «05» 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մադէլ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի Հավելված №1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գնորդն իրավունք ունի՝

2.1.1. Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի:

2.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3. Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4. Եթե հանձնվել է պայմանագրի Հավելված №1-ով նկարագրված տեխնիկական բնութագրի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրի Հավելված №1-ով նկարագրված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքով:

2.1.5. Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7. Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, կամ խախտվել է Պայմանագրի 4.1 կետով սահմանված պայմանը.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի,

գ) Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.3, 2.4.4 և 2.4.8 կետերով նախատեսված պարտավորությունները:

2.1.8. Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2. Գնորդը պարտավոր է՝

2.2.1. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող Պայմանագրի շրջանակներում նախատեսված անհրաժեշտ գործողությունները:

2.2.2. Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5. Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3. Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2. Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3. Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1. Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4. Վաճառողը պարտավոր է՝

2.4.1. Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2. Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4. Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6. Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8. Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9. Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի գինը կազմում է **7 873 200 (յոթ միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2. Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված №2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին: Ապրանքի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1. Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2. Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3. Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4. Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

5.5. Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ Վաճառողը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2. Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9. Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի №№ 1, 2, 3 և 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Մադէլ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Մ.Ավետիսյան փող 8ա շենք, բն 18
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Դավիթ Անհաղթի մ/ճ
ՀՀ 900011018679	ՀՀ 1635980023315
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00907267
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Մադէլ» ՍՊԸ-ի տնօրեն
Հ.Հովհաննիսյան	**Մ.Գասպարյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«25» «05» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-2» ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Մատէր» ԱՊԸ-ի
տնօրեն
Մ.Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	գնման միավոր չափման	Ընդհանուր միավոր	Ընդհանուր տարեսկզբի	Մատակարարման ենթակա ընդհանուր քանակը

2	18111100	արտադրական հատուկ հագուստ	• **Գլխարկը՝** Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, դարչնագույն երիզով և գլխարկաբոլորքով: Կազմված է սև, լաքապատ գլխարկահովհարից և գլխարկաբոլորքից: Գլխարկաբոլորքը դարչնագույն է՝ 2մմ լայնքով կարմիր մահուդից կարված երիզով: Գլխարկի կենտրոնում ամրացվում է գլխարկանշան: Գլխարկահովհարը սև է, լաքապատ (նկար 2): Գլխարկանշանը՝ Մետաղյա ձուլվածքից կամ պլաստմասայից: Գլխարկանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ» բառերը (նկար 10): Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի գլխարկանշանը ունի 40մմ բարձրությամբ և 29մմ լայնությամբ վահանի տեսք (տարբերանշանի փոքր տեսքով), ամրացվում է գլխարկի առաջնային մասի կենտրոնում: • **Տաբատ կամ կիսաշրջազգեստ գարնանային աշնանային (քանակները ըստ տրամադրված ցուցակի).** Տաբատ՝ մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին գոտեմակօղերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով: Արտաքին գրպանները ուղիղ: Հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան (նկար 2): Կիսաշրջազգեստ՝ մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով: Գոտին՝ գոտեմակօղերով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով (նկար 4): • **Բաճկոն գարնանային-աշնանային.** Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, ուղիղ ուրվագծով, կոճկվում է 4 կոճակով: Օձիքը ծալովի, լանջափեշերի ներքևի մասերում վրադիր կափույրներով գրպաններ, իսկ վերևի մասում թեք ներկարված փոքր գրպաններով: Աստառը մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 2): **Տարբերանշանը՝** Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ» բառերը (նկար 9): Բնապահպանական պետական տեսչության տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ձախ թևքին: • **Փողկապ.** Սև գույնի կտորից, ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով և ամրակով (նկար 1, 2, 3, 4): • **Կաշվե գոտի.** Բնական կաշվից՝ 50մմ լայնությամբ, երկանցք, մետաղյա ճարմանդով և զենքի համար նախատեսված պատյանով (նկար 5, 6, 7, 8):	լրակազմ	28 800	1728 000	60

3	18111100	արտադրական հատուկ հագուստ	• **Գլխարկը (կեպի).** Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, բամբակյա գործվածքից, ճակատային մասի կենտրոնում ամրացված է գլխարկանշանը (նկար 6; 8): **Գլխարկանշանը**՝ Մետաղյա ձուլվածքից կամ պլաստմասայից: Գլխարկանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» բառերը (նկար 10): Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի գլխարկանշանը ունի 40մմ բարձրությամբ և 29մմ լայնությամբ վահանի տեսք (տարբերանշանի փոքր տեսքով), ամրացվում է գլխարկի առաջնային մասի կենտրոնում: • **Բաճկոնը.** Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, միափեշ, հետծալված օձիքով, բաճկոնի առջևի մասում տեղադրված է շղթա՝ երկու կոճգամով և կաչուն կոճկվածքով, կրծքավանդակին երկու վրադիր գրպան՝ կափույրներով և կոճգամներով, երկու ներկարված կողային գրպանով: Ձախ թևքի վերևի մասում կարված է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը (նկար 6; 8): Տարբերանշանը՝ Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» բառերը (նկար 9): Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ձախ թևքին: • **Տաբատը.** Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, ուղիղ կարվածքով՝ երկու կողային գրպանով և հետևի մասում՝ մեկ գրպանով, առջևի մասում տեղադրված է շղթա (նկար 6; 8):	լրակազմ	24 000	1440 000	60
4	18211100	կիսավերարկու	Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, տաք ներդիրով, կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի ներքևի մասում մեծ վրադիր կափյուրներով գրպաններ, իսկ վերևի մասում՝ թեք ներկարված փոքր գրպաններ: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիսավերարկուի ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը (նկար 1, 3): **Տարբերանշանը**՝ Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ» բառերը (նկար 9): Բնապահպանական պետական տեսչության տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ձախ թևքին:	հատ	28 800	1728 000	60

5	18331200	վերնաշապիկներ	Բաց կանաչ գույնի բամբակյա կտորից, ծալովի օձիքով, ձախ կրծքամասում կոճակով կոճկվող արտաքին գրպան, կոճկվում է 8 կոճակներով: Թևքերը երկար, ուղիղ թևքածալերով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը (նկար 1, 3): **Տարբերանշանը՝** Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ» բառերը (նկար 9): Բնապահպանական պետական տեսչության տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ձախ թևքին:	հատ	4 080	285 600	70
6	18331200	վերնաշապիկներ	Բաց կանաչ բամբակյա կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում կոճակով կոճկվող կափույրով գրպան, կոճկվում է 8 կոճակով, թևքերը կարճ, ուղիղ թևքածալով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը (նկար 2): **Տարբերանշանը՝** Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ» բառերը (նկար 9): Բնապահպանական պետական տեսչության տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ձախ թևքին:	հատ	3 480	243 600	70
7	18331200	վերնաշապիկներ	Բաց կանաչ գույնի բամբակյա կտորից, ծալովի օձիքով, ձախ կրծքամասում կոճակով կոճկվող արտաքին գրպան, կոճկվում է 8 կոճակներով: Թևքերը երկար, ուղիղ թևքածալերով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանը (նկար 1, 3): **Տարբերանշանը՝** Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ» բառերը (նկար 9): Բնապահպանական պետական տեսչության տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ձախ թևքին:	հատ	4 080	244 800	60

8	18331200	վերնաշապիկներ	Բաց կանաչ բամբակյա կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում կոճակով կոճկվող կափույրով գրպան, կոճկվում է 8 կոճակով, թևքերը կարճ, ուղիղ թևքածալով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 2): **Տարբերանշանը՝** Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մգացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» բառերը (նկար 9): Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ձախ թևքին:	հատ	3 480	208 800	60
10	18811160	կոշկեղեն կաշվե կոշկերեսներով	**Գարնանային-աշնանային տոնական՝** • Տղամարդու, սև կամ մուգ դարչնագույն կաշվից, երեսամասը ամբողջական առաջամասով: • Կանացի, սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական, հետևամասի և առաջամասի հետ ծալված եզրերով: Ներբանը ձևավորված է պոլիուրէթանից՝ սոսնձով միացման մեթոդով: Կրունկը՝ մինչև 5 սմ բարձրության, փաթաթված երեսամասի նյութով:	զույգ	6 960	417 600	60
11	18811210	ճտքավոր կոշիկներ	**Ձմեռային դաշտային՝** սև գույնի բնական կաշվից, միջնադիրը՝ բնական մորթուց, երեսամասից կապվում է քուղերով կամ կոճկվում է շղթայով, ներբանները՝ ռելիեֆային:	զույգ	8 880	532 800	60
12	18811230	կիսաճտքավոր կոշիկներ	**Ձմեռային տոնական՝** • Տղամարդու, սև գույնի կաշվից, տաք, բնական մորթուց (ոչխարի) ներդիրով: Ներբանները ռելիեֆային, կոճկվում է շղթայով: • Կանացի, սև գույնի բնական կաշվից: Երեսամասը՝ ամբողջական կամ կտրված քթամասով, երկարացված ձևավոր հետևամասերով, կրունկը՝ մինչև 5,5 սմ բարձրության: Լեզվակը միացված է առաջամասին:	զույգ	9 600	576 000	60
13	18811230	կիսաճտքավոր կոշիկներ	**Ամառային դաշտային՝** • Սև բնական կաշվից, միջնադիրը՝ բյազ կամ համարժեքը, երեսամասից կապվում է քուղերով կամ կոճկվում է շղթայով, ներբանները՝ ռելիեֆային:	զույգ	7 800	468 000	60
	Ընդամենը					**7873 200**	

- Բոլոր ապրանքների համար մատակարարման վերջնաժամկետ է համարվում 2018 թվականի սեպտեմբերի 30-ը:
- Բոլոր ապրանքների մատակարարման հասցեն՝ ք.Երևան, պատվիրատուի նշված հասցեով, մինչև պատվիրատուի պահեստ:



Տղամարդ տեսուչի ձմեռային համազգեստ
Նկար 1



Տղամարդ տեսուչի ամառային համազգեստ
Նկար 2



Կին տեսուչի ձմեռային համազգեստ
Նկար 3



Կին տեսուչի ամառային համազգեստ
Նկար 4



Տղամարդ տեսուչի դաշտային ձմեռային համազգեստ
Նկար 5



Տղամարդ տեսուչի դաշտային ամառային համազգեստ
Նկար 6



Կին տեսուչի դաշտային ձմեռային համազգեստ
Նկար 7



Կին տեսուչի դաշտային ամառային համազգեստ
Նկար 8

Տարբերանշան (թևի համար)
Նկար 9

Գլխարկանշան
Նկար 10

Հավելված №2
«25» «05» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-2» ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Մադէլ» ՍՊԸ-ի
Տնօրեն
Ս.Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
2	18111100	արտադրական հատուկ հագուստ	-	-	-	-	-	198 720	720 576	720 576	720 576	1728 000	1728 000	1728 000	**1728 000**
3	18111100	արտադրական հատուկ հագուստ	-	-	-	-	-	165 600	600 480	600 480	600 480	1440 000	1440 000	1440 000	**1440 000**

4	18211100	Կիսամեքենաներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5	18331200	Վերնաշապիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6	18331200	Վերնաշապիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7	18331200	Վերնաշապիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8	18331200	Վերնաշապիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10	18811160	Խոշկերեն կոշիկներ տղաների	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11	18811210	Սպորտային կոշիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12	18811230	Կիսամբարձակոշիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	18811230	Կիսամբարձակոշիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
			468 000	**576 000**	**532 800**	**417 600**	**208 800**	**244 800**	**243 600**	**285 600**	**1728 000**	468 000	576 000	532 800	417 600	208 800	244 800	243 600	285 600	1728 000	468 000	576 000	532 800	417 600	208 800	244 800	243 600	285 600	1728 000	195 156	240 192	222 177	174 139	87 069	102 081	101 581	119 095	720 576	195 156	240 192	222 177	174 139	87 069	102 081	101 581	119 095	720 576	53 820	66 240	61 272	48 024	24 012	28 152	28 014	32 844	198 720

Հավելված №3
«25» «05» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-2» ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Մադէլ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Մ.Ավետիսյան փող 8ա շենք, բն 18
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Դավիթ Անհաղթի մ/ճ
ՀՀ 900011018679	ՀՀ 1635980023315
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00907267

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____ » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պեկության կարիքների համար ապրանքի մատակարարման պեկական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «25» «05» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-2
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2018թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք են հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №3.1
«25» «05» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Մադէլ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «25» «05» 2018 թվականին կնքված №«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-2» պայմանագրի շրջանակներում Վաճառողը «_____» «_____» 2018 թվականին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն